ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունվարի 2024 թվականի N 95-Ա

«ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԼԱՈՒՐԱ ԶՈՀՐԱԿԻ ՍԵԴՐԱԿՅԱՆ» Ա/Ձ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի կարիքների համար մանկապարտեզներին 2024 թվականի համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 9 մասնակիցներ, այդ թվում «Լաուրա Զոհրակի Սեդրակյան» Ա/Ձ -ն, սակայն վերջինիս սահմանված ժամկետում համակարգ չի ներբեռնել էլեկտրոնային-թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը, ինչպես նաև պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ չի մուտքագրել որակավորման և պայմանագրի ապահովումները և դրանք ներկայացնելու մասին գրությունը, դրանով իսկ զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ որոշում եմ.

1.«ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Լաուրա Զոհրակի Սեդրակյան» Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 74434548, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի, Գետափնյա 1-ին փողոց, թիվ 9, իրավական հիմք՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետ) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել «Լաուրա Զոհրակի Սեդրակյան» Ա/Ձ-ի տնօրենին և ՀՀ Ֆինանսների նախարարություն:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. հունվարի 23
ք. Մարտունի